



ՌՅԺԸ. 1869 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՕԳՈՍՏՈՍ

ՆՇՄԱՐՔ ԵՒ ՆՇԽԱՐՔ

Ի Հայաստան Աշխարհի.

(Տես էրես 193)

ԺԴ. Կարնոյ Դավրիժու գրունէն ելայ, դէպ յարևելք ճամբայ բռնեցի երթալ ի Շիրակ. յայտնի է որ անոր բազմաթիւ շինից և աւերակաց մէջ աւերակաց թագուհին Անի պէտք էր ըլլալ իմ հայրենայուչ ուխտատեղեացս զլիաւոր մէկ կեդրոնն: Հասարակաց ճամբան կ'անցնի Տէվէպոյուն լեռնէն՝ որ Գարկապազար լեռանց երեք մղոնաչափ երկայն շարքին վրայ է, և անցատեղին Կարնոյ քաղաքէն հազիւ 6-700 ոտք բարձր է. գարնան՝ արդարեւ դարնանային գունագոյն զգեստով դարդարուած կը խայտան լեռնատափք և լեռնալանջք. անշուշտ Սալաձորեցի սարկաւադին յիշած ծաղկըններէն շատն չորս գին կը ծիծաղէին, երբ ակամայ անգթութեամբ ալ կոխելով վրանէն և քովերնէն կ'անցնէինք: Վերջի անգամ մը դառնալով յարևմուտք և

Կարնոյ ծովադաշտին ու նաւաքաղաքին բաղդաշունչ հով մաղթելով, դարձայ ուրիշ և աւելի ընդարձակածաւալ դաշտի մը՝ ուր անմիջապէս կ'իջեցընէր լեռնանցքն, ըլլալով բաժանիչ թէ այն դաշտացն և թէ անոնց ջրերուն ու գետերուն. — Կարինէն կ'իջնայինք ի Բաւսն, Եփրատայ հովտէն՝ ի հովիտն Երասխայ. — նեղ և երկայն լեռանց պատուար մը՝ իբրեւ բարակ պատ մը երկուց սենեկաց՝ կը բաժնէ այս երկու միափոր քերց և դայեկամարց ծաղկածին տարածոցները. — նոյն ինքն երկուքին անջրպետ, նոյն ինքն երկուքին ալ առաջին սննդատու աղբիւրն է. վասն զի մէկ կողմը Եփրատայ ակունքն են որ դէպ յարևմուտս կ'երթայ ոռոգել, մէկալ կողմն՝ Երասխայ, որ կը վազէ յարևելս, Հայաստանի բնիկ դայեակն և արբուշիչն ըլլալու: Հիմակուան աշ-

խարհագիրք կարծեն որ Պինկէօլ լեռ-
ներէն եկած համանուն գետակն՝ որ
Քէօփրիւ-քէօյի (վաղարշաւանի) քով
կը խառնուի Բասենոյ ջրոյն հետ՝ երաս-
խայ առաջքն՝ կամ ակնաղբիւրն ըլլայ.
սակայն մեր հին աշխարհագիրք կը վկա-
յեն որ երասխ ի Բասենոյ կը բղխէ.
ուրեմն ոչ նա՝ այլ այս ջուրս՝ որ Կար-
նոյ և Բասենոյ անջրպետ լեռներէն կը
բղխէ՝ և հազիւ քանի մը մղոն հեռու է
Եփրատայ ակունքէն, սոյն ինքն է երաս-
խայ աղբերակն: Իբրեւ թէ երկուքին
գլուխն այլ նոյն բարձի վրայ դրուած,
բայց զանազան կողմէ, մինչդեռ երասխ
աշուրները կը բանայ արևուն ծիրանի
ճառագայթներուն, և դէպ անոնց վազ-
վրդելով գրեթէ շիտակ ճամբով միշտ
դէպ յարևելս կը փութայ և շուտով կը
հասնի իր և հասարակաց գետոց պա-
ռաւ մօր ծոցը՝ ի ծովն (Կազրից), իր
համիրակ և համանման յուշկապարիկ
քոյրն Եփրատ՝ ստիպուած հակառակ
կողմն ելլելու իջնելու, բայց իբրեւ կա-
րօտ նոյն արևուն ծագման կողմին՝ յետ
յարևմուտս և ի հարաւ թափառելու
երկար ատեն և երկար միջոցներ, վեր-
ջապէս ինքն ալ կը դառնայ յարևելս, և
հեռաւոր աշխարհաց ծայրեր հասնելով
Արաբաց և Պարսից՝ հնդկային Ովկիա-
նու յառաջադէմ ծոց մը կը գտնէ և հոն
կը հանգչի: — Ո՛րչափ մօտիկ էին իրա-
րու այն երկու քերց բիւրեղափայլ գը-
լուկքն՝ բնութեան ծոցէն արթնցած
ատեննին, և որքան հեռու իրարմէ ի-
րենց ծովավէժ գարշապարքն: Եթէ ե-
րասխ իր ծաղկէնկար բարձէն փունջ մը
փրցընէր և դոնդողներուն վրայէն խա-
ղալով խնտալով սահեցընէր հասցընէր
իր վերջին ծայրը՝ երկու օրուան մէջ,
նոյն բանը ընելու համար՝ Եփրատայ շա-
բաթ մը ժամանակի չէր բաւեր:...

Գետերն երկրիս կենդանատու երակ-
ներն են, կաթն և արիւն միանգամայն.
և դարձեալ առաջին ճանապարհք և ինք-
նին իսկ քալուկ ճանապարհք մարդ-
կան. աշխարհավարութեան մէջ ալ
կարևոր տեղ կը բռնեն, գուցէ աւելի
քան զլերինս. շատ գիտմամբք գեղեցիկ

և խոր մտածութեանց առիթ կըրնան
ըլլալ մտաց. մանաւանդ եթէ մէկն ինծի
պէս դանդաղ քայլերով ճամբան ընէ
գետեզերքէ մը. և ևս առաւել եթէ ըլ-
լայ գետն այն՝ երասխայ պէս գետ մը,
որ սեփականագոյն Հայաստանի հովիտն
և դայեակն է. անոր համար սիրելի էր
ինծի դեգերիլ այս Աղբերակաւց դաշ-
տակիս մէջ, վասն զի այսպէս կ'անուա-
նէր հին ատեն այս տեղս՝ ուսկից կ'անց-
նիմ, և երասխայ բղխած բուն աղբե-
րականց տեղն այլ՝ Արծաթաղբերք:
Օրհնեալ ըլլան այն մեր հին հայկազն
նահապետին շրթունքն՝ որ այսպիսի ար-
ժանաւոր և գեղեցիկ անուամբ կնքեցին
երասխայ Աղբերակունքը: Երջանիկ
դարեր, որ այսպիսի անուններ կ'ազդէին
երկրիս ազատաճեմանդրանկաց. երանի
անոնց որ այսպիսի արծաթաբուղխ աղ-
բերականց քով արծաթահիւս կամ ու-
կէթել օրերով կեանք անցուցին: Ար-
դարեւ թէ անուամբ թէ դրիւք՝ Եղեմայ և
Երջանկութեան տեղոյն կէտերէն մէկն
էր այս տեղս այլ, զոր նախախնամու-
թիւնն պարգևեց մեր հարց և հայրենեաց.
հըր էր թէ չնամին երջանկութեան այն
պէս շուտով հալածուէր այն տեղերէն՝
ինչպէս Հազարաւուխտն այն զօրավար
Պարսից, որ հաւատարիմ Հայոց և քաջին
վահանայ Մամիկոնենի հետամուտ ըլ-
լալով՝ օր մ'եկաւ բանակեցաւ այս ար-
ծաթափայլ Աղբերականց դաշտիս մէջ.
և ահա իսկոյն հոն դեսպան հասաւ ի-
րեն իր թագաւորէն (Պերոզէ), որ շու-
տով յետ դառնայ դայ ի Պարսկաստան.
և ելաւ գնաց անդարձ:...

Աղբերականց դաշտակս՝ Բասենոյ
ընդարձակ դաշտին և դաշտագաւառաց
սկիզբն է. ինչպէս և իր երկու ջուխտակ
գեղերն Տոռ մեծ և փոքր՝ Բասենոյ գլուխ
էին, և հին ատեն կ'ըսուէին Դոռ և Որ-
դորոռ, Որդունեաց ցեղին նահապետին
և Բասենոյ եպիսկոպոսի մը աթոռ ըլ-
լալով: Կարինէն ինչուան ի Սօղանլու
լեռներ, և անկէ անդին ինչուան ի Շի-
րակ գաւառ կը տարածի Բասեն, Ե-
րասխայ հետ ցածնալով. հին և անյի-
շատակ ժամանակներ հաւանօրէն Բաս

անուամբ նահապետ մը իր ցեղով կը տիրէր այս բարեբեր տարածութեան վրայ, որ յետոյ Այրարատայ նահանգին կամ աշխարհին մասն ըլլալով՝ անոր գաւառաց երկուքն եղան. այսինքն մեր քաղաքական կամ աշխարհագրական բաժանմանց համեմատելով գաւառի մը համար շատ ընդարձակ էր, երկու գաւառի բաժնուեցաւ, միայն չափով և օրէնքով, առանց բնական բաժանարար մ'ու նենալու, լեռ կամ գետ. մէկն՝ արեւմտեանն՝ վերին ըսուեցաւ, զրիցը բարձրութեան համար, միւսն՝ արեւելեանն՝ ստորին. կ'երևի թէ այս ետքինիս վերա կացուն կամ իշխողն էր որ հին ատեն կ'ըսուէր Բասենոյ դատաւոր: Վերինն Բասեն թէ և զառ ի վայր հակեալ բայց ան զգալի և բոլորովին դուրան է. Ստորինն աւելի ալէճեւ, մանր բլուրներով և տափերով. Սողանլու լեռներէն անդին եղած դաշտն ալ իբրեւ շարունակութիւն մը Բասենոյ կ'ըսուէր Անիայտ Բասենս, յետոյ վունդ անուամբ Բուղար մը հոն բնակելով՝ վանանդ ըսուեցաւ. վանանդայ դաշտն ալ կը խառնուի Շիրակայ դաշտին հետ. և այսպէս անհուն տարածութիւն մը կը ձևանայ Երասխայ հովտին, զոր միայն յիշեալ Սողանլու անտառախիտ լեռներն կը կտրեն, անոր փայտ մատակարարելու համար. միանգամայն և ինչպէս քիչ մ'առաջ ըսի՝ Բասենոյ և վանանդայ սահմանահատ են:

Ժե. Երկրին տափակութեանն համար շատ տեղ ջրոց ճահիճներ կան ի Բասեն. այս տեղս աւելի Պոսիդոնի քան Պղոտոնի վիճակ կըրնայ ըսուիլ, թէ և այս ետքինիս նշաններն ալ կան. ատեն նոք աւելի կամ պակաս եղած են այս ջրերս. և ըստ այնմ բնակութիւնն ալ աւելի կամ պակաս եղած է. հիմայ 200^ն չափ գեղ կը համրուի երկու մասին միանգամայն. երեք մասն վերինին մէջ, երկուքն՝ վարինին. գլխաւոր շէնքն վերին Բասենի մէջ է, Հասանգալէ Բերդաքաղաքն (իբրեւ 39° 58' լայն. աստիճանի տակ). Կարնոյ քաղաքէն եօթն ժամ հեռու: Ժե դարուն մէջ Պարսից իշխող

Ուզուն Հասան կամ Հասան-Պէկ Թաղաւորն համարուի շինող կամ Նորոգող Հասանգալէի, թէպէտ ոմանք շատ աւելի հին կարծեն, ի Յուստինիանոս և ի Թէոդոս կայսերաց շինեալ, և յետոյ ի Գրիգորէ Մագիստրոսէ կամ իր ազգական Հասան անուն իշխանէ մը, և ըստ ուսմեաց՝ ի ճենովացուց: Ով ալ ըլլայ շինողն՝ այս կողմերուս պահպանութեանն համար ամբողջ մը հաստատեւր է զայն, և կըրցածին չափ ալ ամրացուցեր. նախնեաց յիշած Ծիրանեաց հրաբլուխային լերին արեւմտեան թևի վրայ, 5140 ոտք բարձր ծովուն երեսէն. ուսկից 1700 ոտք աւելի բարձր է լեռան գագաթն, որ հիւսիսէն քաղաքին վրայ նայելով՝ շատ ապահով չընէր զայն ի թշնամեաց, թէ և բաւական ամուր է բերդն, երկու կարգ պարիսպներով և աշտարակներով, քառակուսի իմնձեւով, իբրեւ 320 չափ երկայն և 100^ն աւելի լայն. քաղաքն բերդին հարաւային արեւմտեան կողմն է, և առանձին պարիսպ ունենալով՝ Հասանգալէ եռապարիսպ կ'ըսուի. բայց այս պարիսպներս խարխուրած են, խրամներն ալ աւերած և ցամքած, բաց ի արեւելեան կողմէն՝ ուր դեռ ջուր կայ, բայց այն ալ ի մնաս քաղաքին. վասն զի ամառը կ'ապականէ զօդը, և կըրնար մնասակար ըլլալ, եթէ այն գէշ ջրերուն քով լաւ և առողջարար ջուրը ալ չըլլային, այսինքն Զերմուկը: Արեւելեան և արեւմտեան կողմերը մէկ մէկ մեծ դուռ ունին պարիսպն: Ռուսք 1829^ն անաշխատ առին այս բերդս, վասն զի Օսմանեանք թողեր էին. և նորէն ասոնց ձեռք թողլու ատեննին՝ աւերջողեցին: Այն ատեն 500 տունէն աւելի բնակիչ ունէր Հասանգալէ, հիմայ 300^ն աւելի. մեծ մասն մահմետական, որ մզկիթ մը ունին բարձրագիւր և փայլուն մնիրայով: — Ժամանակ ունեցող հետախոյզն կըրնայ գտնէ քանի մը հին յիշատակներ զըտնել կամ նշանելու բաներ. ինչպէս այն քարաժայռը որ բերդին մէկ կողմը կախուածի պէս կեցած է, և փորած քարայր մ'ունի, որուն պատերուն և ձե-

դուան մէջ ցրցած են եղջիւրներ, զոր ոմանք կարծեցին կռապաշտից ատենէն մնացորդ զոհագործութեանց. — մեծաւ մեծ քարերու կոյտք յարեմտից և ի չ. բերդին. — ջրամբարք՝ լեռան գլուխը, և Հաւաւնտէտէ ուխտատեղին. — քարակտուր և գետնափոր ճամբայն որ կ'իջեցընէ ի գետեզրն:

Ես ասոնց ամենն ալ չտեսայ, և ոչ Բաւեւնոյ վաւերքն, որ ծիրանեաց լեռին արեւելոյմը շինուած է ի Գրիգորէ Մագիստրոսէ՝ որոյ գերեզմանն ալ կ'ըսուի հոն, փոքրիկ այլ ամրաշէն և դմբեթաւոր եկեղեցւոյն դրան քով. որուն շէնքէն աւելի զմայլեցուցիչ է դիւքն. նա յեւով ծովանման հարթածաւալ դաշտին վրայ, ուր Մուրց գետ (Պինկէօլ սու) կը խառնուի Երասխայ հետ (Բասենու կամ Հասանդալէի ջուր) Քէօփրիւ քէօյին քով, և ուրիշ վտակներ ալ անոնց. չորս գին հեռուէն պարսպաձև լեռներ, դիմացը Ստորին Բասեն դար ու փոս ձևով, իսկ մօտերը դուր ու շիտակ գետին մը, որ դալարութեան ատեն յիրաւի կանանչ ծովու կերպարանք կ'ընծայէ, որուն համեմատ չեն երևար ցրուեալ գեղերն:

ԺՁ. Նորընծայ Երասխ գետն Հասանդալէի հարաւակողմը պատելով կ'անցնի. վրան 4ակամար հին քարաշէն կամուրջ մը կայ, որուն հնութիւնն հիմայ փայտով կարկըտուած է. անկէց անցնելով և կէս փարսախ մը դէպ յարեմուտք դառնալով հարաւախառն՝ կ'երևան և կը լսուին անուանի Զերմըկաց ցայտքն, շողին և հոտերն. զանազան աղբիւրներ են, աւելի կամ պակաս տաքութեամբ, ամենէն տաքն 32° Բէօմ. իսկ տեսակը ջրոցն են այլ և այլ, աղային, ծծմբային, բորակուտ, կպրահամ և երկաթահամ. ոմանք ինչուան գետոյն միջէն ալ կը բղխեն պղպըջալով և ցատքըտելով: Կարնոյ իլիճէի ջերմկաց պէս ասոնք ալ կը գործածուին բաղանեաց, մանաւանդ իրեքն, որոց երկուքն զմբեթաւոր ծածքի տակ առնուեցան. մէկը մեծ է և քարաշէն Գանկիւնի աւազանաւ, իւր 30' ոտք տրամագծաւ

և 180' շրջապատաւ և 10' խորութեամբ. գեղեցիկ զմբեթով, զոր ոմանք հռովմայեցի կամ բիւզանդացի շինուած կը սեպեն. ոմանք ալ կ'ըսեն թէ Խամայէլ աւազանաւ Կարնոյ մաքսապետ մը շինած է, ոմանք ալ Էրզրումի Զիֆտէ մինարէին շինութեան ժամանակակից կը սեպեն: Մեր միջինդարեան բժշկապետք Հաւաւնտէտ կամ Հաւաւնտէտ հրաշալի ծաղկան վրայ խօսելու ատեն կը յիշեն Բասենոյ Զերմուկներն ի գիւղն Դարոյնք. այս անուամբ ուրիշ տեղիք ալ կան ի Հայս, բայց կ'երևի թէ այն ատեն Հասանդալայի տեղն այս գիւղս էր: (Միայն պէտք է յիշեմ որ Բասենոյ մէջ ուրիշ տեղուանք ալ կան Զերմուկք, ինչպէս Քէօփրիւ-քէօյին քով, Զիւին գիւղին քով, և ասոր հարաւակողմը բնիկ Զերմուկ անուամբ գեղ մ'ալ կայ): Հաւանօրէն մեր Հիպոկրատաց հոս յիշած լեռն այլ ծիրանեաց լեռն է, որոյ համար կ'ըսեն, թէ են « վէմբ երեք, և գտանի (Համասփիւռ ծաղիկն) ի մէջ վիմացն. իսկ նշանք երեք վիմացն՝ այս են. մին չորեքկուսի է և միւսն եղան? և տափակ, և այլ տես. և զմինն յայլ լեռին տես... զոր անուանեն Այգորդ »: Այս Այգորդ անուամբ գեղ մը ծանօթ է Բասենոյ գլուխը, Դուայ մօտ. գեղ մ'ալ կը յիշէ բժշկական խնճորքերոյ անուամբ, ուր նոյն պէս կը գտուէր այն հրաշալի ամենաբոյժ ծաղիկն. որոյ գերագոյն զօրութիւնն ալ էր միտք բանալ. — բայց որովհետեւ Անանիա Շիրակացւոյ պէս մէկ մը (ինչպէս կ'աւանդեն մեր բժիշկքըն) այս ծաղիկս փորձելով միտքը չարաչար բացեր էր, ես վախցայ փնտրուելու այն երկգիմի բազմագունի և 12աճիւղ ծաղիկը, և հեռացայ...

Հասանկլայի և իր ծիրանեաց լեռին չորս կողմի ստորոտքն ալ նշանաւոր տեղուանք կան, ամենն ալ մօտիկ քաղաքին. արեւմուտքէն՝ յիշեալ Զերմուկքն. հիւսիսէն Ս. Յուսէփ վանքը, որ առաջ Ակսիգումն կ'ըսուէր. հարաւէն՝ Ալվար գեղը, ուր բանակեր էր Շապուհ Միհրանեան Պարսից զօրավարն:

յամի 488, վահանայ դէմ դալով, երբ լսեց իր Պերող թագաւորին մահը և դարձաւ ի Պարսկաստան: Իսկ արևելքէն աւելի նշանաւոր միանգամայն և ահաւոր տեղ է Ոկոմի (կամ Աշկոմի) գիւղն. որ այս կողմերուս գլխաւոր շէնքն եղած կ'երևի. զոնէ շատ բարգաւաճ քաղաքաւան մ'էր յառաջին կէս ԺԱ դարու. երբ նախ վասիլ կայսրն եկաւ (յամի 1024), և ի վրէժ արհամարհանաց վրաց թագաւորին՝ որ տիրացեր էր այս երկրիս, աւրեց «հրով և սրով և գերութեամբ», նոյնպէս անոր շրջակայ գեղեր և ագարակներն ալ¹. յետոյ 35 տարի վերջը (1056) եկան թուրքաց ասպատակքն, և Արծինի մէջ բրածնին հոս ալ կրկնեցին. Աստուածաշայտնութեան տօնին գիշերը յանկարծ վրայ հասնելով բոլոր բնակիչքը «որ 30,000 հոգի էին, սրակոտոր ըրին, մէկ մրկէ զարնուած պարտիզի մը պէս անապատացեալ թողուցին այն մարդաշատ և ընչաւէտ» աւանը, ինչպէս կ'անուանէ ժամանակակից հեղինակն¹, և աւարը բեռցուցած տարին: 35 տարի առաջ աւրուած տեղւոյմը՝ նորէն 30,000 բնակչօք լեցուին կըցուցընէ որ յիրաւի բանուկ և հարուստ մեծ տեղ մ'է եղեր, բայց Արծին պէս ալ ամբողջին չունի եղեր. անշուշտ չկար այն ատեն հասանկլայի բերդն, ապա թէ ոչ կը յիշէր պատմիչն:

ԺԵ. Երկու փարսախ կամ երկու ժամ քաղքէն հեռու՝ Մուրց և Բասեն ջուր միանալով կը գործեն գերասխ. ասոնց միութեան վրայ ձգուած է արևելքի հըռչակաւոր կամբըրձոց մէկն, ոչ այնքան մեծագործութեամբը՝ որքան յիշատակաւ, և է Հովուականուրջն Չոպսու-քեօիքիչ ուիշ. համարելով թէ աղքատ կարծուած հարուստ հովիւ մը շինած ըլլայ զայն. կամուրջին մէկ զլուխն գրեթէ Հըմնար լերին կողէն կ'ելլէ, մէկալը դաշտին վըրայ կը կանգնի, եօթն լայնաբաց և սրամէջ ու իրարու անհաւասար կամարներով, 700' երկայն և իբր 30' լայն,

բոլոր ճերմակ ու գորշագոյն քարերով, որոց ոմանց վրայ գծած և քանդակներ կ'երևան. կամարաց գլուխները վեցանկիւնի տնակներու նման շինուած են. մէկուն վրայ ալ պզտի սենեակ մը կայ դրամբ և պատուհանիւ, իբրեւ բնակարան պահապանի. կամուրջին երկու կողմն ալ պսակ կամ պատուար կար 3' բարձրութեամբ, որ հիմայ խանգարեալ է. այսպէս կամարաց մէկն ալ փլեր էր երկրաշարժէ, իբր 30 տարիով առաջ, զոր կարնոյ Հաֆըզ փաշան նորոգել տուաւ վաղարշաւանի մեծամեծ տաշած քարերով, բայց 13 տարի ետեւ ուրէն փլաւ. այն ատեն փայտով կարկատեցին. իսկ վերջի Ռուսաց և Օսմանեանց պատերազմին ատեն՝ ետքին ներս մասամբ փլուցին կամուրջը՝ թշնամեաց անցքը խափանելու համար, և յետոյ հարկ եղաւ վեր ի վերոյ նորոգել: Այս վիճակին մէջ ալ պահելով իր հնութեան շնորհքը՝ դեռ արժանի է զննութեան Հովուականուրջն Երասխայ, որ կայսերաց կապած կամուրջները կոտորտելով զասիկայ պահեր է երկար դարերէ վեր, անծանօթ թողլով շինողին անունը և ժամանակը. արեւմտեան կողմը երկու արձանագրի հետք կ'երևան, բայց դեռ կարդացուած կամ ստուգուած չեն. ոմանք ինչուան Գարեհի վշտասպեայ մեր Հայկազն Տիգրանին ժամանակակիցին կ'ընծայեն ասոր շինութիւնը. ոմանք ալ մեր վաղարշ թագաւորին ի սկիզբն Գդարու, և յետոյ նորոգեալ յԱրաբացուոց կամ ի թուրքաց: Գետոյն ձախ կողմէն երկընցած բլրի մը տափակ սարին վրայ նոճիներով շրջապատած շիրիմ մը կայ, կ'ըսեն թէ հոն կը հանգչի շինող կամբըրջին. ստոյգ թէ ոչ՝ չեմ գիտեր. բայց արժանի էր այնպիսի նկարագեղ տեղւոյ և հոյակապ մահարձանի այն ճարտարն՝ որ կըցաւ այսպիսի քարաշղթայ սանձով մը նուաճել զկամբըրջնէցն Երասխ, որ իբր չկարենալով դեռ իր պատանեկան բազուկներովը այսքան ամբողջիւնը ցնցել՝ քիչ մը խոտորեր է անոր ներքեւէն, այլ ոչ սղատեր բոլորովին:

1 Լատիվարու. Բ:

Այս մեծ կամուրջս ի հարկէ կը պա-
հանջէր քովը մեծ շէնք մ'ալ բնակու-
թեան. և ունի քանի մը վայրկեան հե-
ռու հիւսիսային արեւմտեան կողմը իր
անուամբ գեղը, Գեօփրիշ-քէօյ, հիմայ
30 տունով, որոց շատն մեր ազգայնոց
են: Այս հիմայ աննշան գիւղին քով
կայ ուրիշ նշանաւոր շէնք կամ աւերակ
մ'ալ, ընդարձակ քարաշէն կարաւա-
նատեղի կամ քառակուսի փակ մը, 120'
երկայն, 70' լայն, կիսով չափ թաղուած
ի հող. երկու կարգ ութ ութ գեղեցիկ
քանդակազարդ սիւներով իրեք սրան-
կիւն կամարակապ սրահ բաժնուած,
իբր 30' բարձրութեամբ. պատերն շատ
թանձր են, իբր 6 ոտնաչափ, քարու-
կրով շինուած, և ոտնաչափ մեծութեամբ
տաշած քարերով պատած. չորս ան-
կիւնները և երկու երկայն կողմերուն
դէպ յարեւելք և յարեւմտք մէջտեղը՝
կան կէս աշտարակաձեք. դուռը հա-
րաւակողմն է, որուն առջին բակ մ'է,
երկու դին մէկ մէկ քառակուսի սենեակ
իբր 22'. պատուհան չունի. ձեղունն
ալ ընկած է. պատերն ալ աւրըշտը-
կած, կէս մը հնութեամբ, կէս մ'ալ
բռնութեամբ, քարերը ուրիշ նոր շէնքե-
րու ի գործ ածուելով. տեղն ալ ամայի
թողուած: Առաջուց կարաւանաց իջևան
էր. գրաստները պատերուն տակ կը
կապէին, մարդիկ երկու սիւնաշարից
մէջ կը կենային: Ո'վ և ինչ բանի հա-
մար շիներ էր այս տեղս. — մերազգիք
կը կարծեն թէ մասն է վաղարշաշանի,
այսինքն այն աւանին՝ զոր շինեց իբր յա-
մի 196 վաղարշ թագաւոր մեր, Տրդա-
տայ պապն, ի յիշատակ իր ծննդեանը.
վասն զի ձմեռ ատեն մայրն յԱյրարատ
երթալով՝ հոս ծնաւ զնա: Մինչև ի ժՊ
դար կը յիշուի վաղարշաւան իբրև մեծ
շէն տեղ մը. անկէ ետեւ գոնէ ես չեմ
յիշեր ի պատմութեան. գուցէ Արծին
և Ակոմեայ աւերիչ ձեռքն՝ վաղարշա-
ւանու ալ դպան: Իսկ այս քաղաքա-
ւանս որ շինուած էր « ի գաւառին Բա-
սեան, ի տեղով ուր խառնին Մուրց
և Երասխ », հիմակուան խառնըրդոց
տեղէն քիչ մը հեռու է. և գուցէ ըլլայ


արեւելակողմը Եաղան մեծ գիւղին քով.
վասն զի կ'աւանդեն բնակիչքն (60
տուն Հայազգի) թէ ատենօք մեծ քա-
ղաք մ'եղած ըլլայ հոն: Իսկ կամրջա-
գիւղն և իր քովի իջևանատեղին շատ
հաւանօրէն Բոյոբապահակ կոչուած
տեղն է, որոյ համար է դարու պատմիչ
մը զնոյն կ'ըսէ զոր ինչ Խորենացին
վասն վաղարշաւանի, ուր « Մուրց և
Երասխ խառնին », և կը պատմէ թէ հոն
(յամին 578) Պարսից մեծ զօրավարն
Տամխոսրով (Տէն-Խոսրու) պատերազ-
մեցաւ և յաղթեց Յունաց: Չարմանալի
է որ անկէ 700 տարի վերջը՝ (յամին
1335) այս անունս գրեթէ անփոփոխ՝
Խալաքի վաճառականի մը գրչի տակ
կը կարդացուի Polorbecche գրած, որ
կարծես կերպով մը կը հաւաստէ տե-
ղացեաց աւանդութիւնն՝ թէ ճենովա-
ցոց շինած կարաւանատանց մէկն է.
այս անտարակոյս ստոյգ է որ այն տեղն
ալ մեր Բուբինեանց Այաս նաւահան-
գըստէն ի Դավրէժ գացող եկող կարա-
ւանաց իջևաններուն մէկն էր: Ինչուան
այս դարու սկիզբները ճամբորդ գաղ-
ղիացի մ'ալ Bagaktun կ'անուանէ այս
տեղս, որ է Պահակտուն. վերի անուան
հետ զոյգ ըլլալով՝ կը նշանակէ որ այս
տեղս ի վաղուց՝ պահպանուող հա-
մար սահմանուած տեղ մ'եղած է,
գուցէ վաղարշայ օրերէն և այլ առաջ,
անցուդարձի մեծ կեդրոն մ'եղած է: —
Միով բանիւ, Հովուականուրջն, վա-
ղարշաւան և Բոյոբապահակ՝ հետաքըն-
նութեան արժանի տեղուանք կամ մէկ
մեծ տեղ մ'են:

Բնաքնինն պէտք չէ զանց առնէ աւ-
կէց կէս ժամի չափ դէպ ի հիւսիս խո-
տորելու, և հրաբխային գետնի մը վը-
րայ, լաւայի, տոփի և չեչաքարանց մէջ
դիտելու հանքային աղբիւրներ լեղի և
տապահամ, որք նեղ ծործորով եկած ա-
ռուակի մը մէջ կը թափին: Շատ համբա-
ւեալ են այս ջուրերս իբրև առողջարար,
անոր համար խուռն բազմութիւն կու-
գայ. և ոմանք յուխտաւորաց գոյնզգոյն
շորեր կը կախեն ջերմկաց եզերք բու-
սած վայրի վարդենեաց վրայ: Քիչ հե-

առաւելի սաստկահոս աղբիւր մը կայ ճերմակ և եղկ ջրոյ, որ երկաթի համ չունի, և 20' տրամագծաւ աւազանի մը մէջ լեցուելով կ'ելլայ կը թափի յիշեալ առուակին մէջ. ջուրը թէ և լեղուա համ է, այլ ախորժելի կու գայ կենդանեաց. չորս դին գետինը շատ բարեբեր է, և երկբացիկ ժժմակաց կճեպներով ծածկուած. — Գուցէ աւելի հետաքննելի ըլլան հնասիրին և հայրենասիրին բո-

լորապահակին հին բնակչաց հանգստարանքն. խոյածև ձիածև գերեզմանքն Հայոց, որոց վրայ քանդակազարդ խաչեր կը տարածեն իրենց սուրբ հովանին ի մէջ անուշահոտ վայրի ծոթրինաց և գետնաճապող ճակնդեղաց... Ո՛հ, ինչ անոյշ կու գար՝ նաև հետցամբ քելուն՝ այն խաչարձանաց մէջ բուսած և քաղուած ծաթրինն ու ծաղիկն:

Կը շարունակուի:



ԳՐԻԾՏԱՓՈՐ ԳՈՒՄԳՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ Ի ՃԵՆՈՎԱ